ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

✉ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք, ՀՀ, Լոռու մարզ, ք.Շամլուղ, 2-րդ փող. շենք 9

☎(0253)60474, shamlugh.lori@mta.gov.am
shamlugh@mail.ru

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

N 210
14.07. 2017թ.

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում ենք Շամլուղ համայնքի ավագանու թիվ 20, թիվ 21 (հավելված), թիվ 22-Ա, թիվ 23 և թիվ 24-Ա որոշումները.

Առդիր 7 թերթ:

14.07.2017

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
Հ2, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017թվականի N 20

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին,» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Շամլուղ համայնքի ավագանու 2017թվականի հուլիսի 7-ի հերթական նիստի օրակարգը

1. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
3. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
4. ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՊՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կողմ - 5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
4. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017թվականի N 21

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Շամլուղ համայնքի 2017թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

Հավելված
Շամլուղ համայնքի ավագանու
2017թ. հուլիսի 7-ի թիվ 21 որոշման

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Շամլուղ համայնքի 2017թ.բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականը եկամուտների մասով կազմել է 11530.7 հազ. դրամ, այն նախատեսված է եղել 11526.5հազ. դրամ, կատարման տոկոսը կազմել է 100.0: Սեփական եկամուտը կատարվել է 2877.5 հազ. դրամով, նախատեսված 2873.3 հազ. դրամի դիմաց՝ կամ կատարվել է տոկոսով, այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կազմել էր 100.1տոկոս:

1. 2017թ. բյուջեի վարչական մասի եկամուտները

1) Հողի հարկ

Հողի հարկը համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար պլանով նախատեսված 105.7 հազ.դրամի դիմաց կատարվել 64.1 հազ.դրամով, կատարվել է 60.6 % -ով:

2)Գույքահարկ

Գուքահաարկը նախատեսված է եղել 400.0 հազ. դրամ,այն կատարվել է 462.6հազ. դրամով՝ կամ կատարման տոկոսը կազմել է 115.6 %

3)Տեղական տուրքեր

Տեղական տուրքերը նախատեսված 20.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 30.0 հազ.դրամով:

4)Հողի վարձավճար

Հողի համար վարձավճարը փաստացի կազմել է 2320.7 հազ. դրամ՝ նախատեսված 2347.7 հազ. դրամի դիմաց, կատարման տոկոսը կազմել է 98.8 %

5)Պաշտոնական ընթացիկ տրանսֆերենտներ

Պետական բյուջեից նախատեսված դոտացիան տրամադրվել է նախատեսված 8653.2 հազ,դրամը

2. 2017թ. բյուջեի երկրորդ եռամսյակի ծախսերի կատարողականը

Բյուջեի ծախսային մասի կատարողականը կազմել է 11145.7 հազ. դրամ, այն նախատեսված է եղել 11526.5 հազ. դրամ ,կատարման տոկոսը կազմել է 96.7 %:

Բյուջեի ծախսերը `ըստ բյուջետային ծախսերի գործառնական տնտեսագիտական դասակարգման կատարվել են՝

1 Կառավարման ապարատի պահպանման համար ծախսվել է 7379.8 հազ. դրամ, այն նախատեսված է եղել 8689.0 հազ. դրամ.կատարողականը կազմե է 84.9 %, այդ թվում՝

- Կառավարման ապարատի աշխատողների աշխատավարձերի և աշխատավարձերից պահված եկամտահարկի վճարման համար նախատեսված 5584.0 հազ. դրամի դիմաց կատարվել է 5581.6 հազ. դրամ կատարման տոկոսը կազմել է 99.9 %:
- Էներգետիկ ծառայության համար ծախսվել է նախատեսված 350.0հազ..դրամի դիմաց 307.1 հազ.դրամ,
-Կապի ծառայության համար ծախսվել է 240.0 հազ.դրամ,պլանով նախատեսված է եղել 215.4 հազ. դրամ,

-Գործուղման համար նախատեսված 70.0 հազ.դրամի դիմաց կատարվել է 57.1 հազ. դրամով:

-Համակարգչային ծառայությունների համար ծախսվել է 38.4 հազ. դրամ,նախատեսված 80.0 հազ. դրամի դիմաց: Այս գումարը փոխանցվել է ,,Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն'' Հասարակական Կազմակերպությանը՝ Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը սպասարկելու նպատակով

-Տեղեկատվական ծառայությունների համար ծախսվել է 55.2 հազ.դրամ,60.0 հազ. դրամի դիմաց :Այս գումարը ծախսվել է ,,Լոռու մարզ'' , ,,Գործընթաց''թերթերի և ,,Էկոնոմիկա'' ամսագրի բաժանորդագրության նպատակով

-Գրասենյակային նյութեր և ապրանքներ ձեռք բերելու համար ծախսվել է100.0հազ.դրամ,նախատեսված 100.0հազ.դրամի դիմաց

-Տրանսպորտային նյութերի համար ծախսվել է 695.0 հազ. դրամ՝. նախատեսցած 900.0 հազ.դրամի դիմաց

-Կենցաղային նյութեր ձեռք բերելու համար ծախսվել է 100.0 հազ.դրամի դիմաց 80.0 հազ. դրամ

- Վարչական սարքավորումների հոդվածով ծախսվել է 250.0 հազ.դրամ, այս գումարը ծախսվել է համակարգիչ ձեռք բերելու համար:

2. Աղբահանության համար ծախսվել է նախատեսված 1080.0 հազ.դրամի դիմաց ծախսվել է 679.0 հազ.դրամ

3. Հայաստանի Համայնքների Միության անդամավճարի համար ծախսվել է 40.0 հազ.դրամ

4.Միջոցառումներ անցկացնելու նպատակով ծախսվել է 80.0 հազ.դրամ

Շամլուղ համայնքի ղեկավար Լ.Բեժանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017թվականի N 22-Ա

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման 9-րդ կետով.

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Շամլուղ համայնքի հողային հաշվեկշիռը 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ, համաձայն ձև 22-ի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017թվականի N 23

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 12.05.2015թ. թիվ 54/1 դրական եզրակացությունը.

Համայնքի ավագանին որոշում է՝

1. Լոռու մարզի Շամլուղ համայնքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 2.34058 հեկտար անտառային ֆոնդի հողամասը փոխադրել հատուկ նշանակության հողերի կատեգորիա՝ պաշտպանական նպատակներով մարտական հենակետ կառուցելու համար:
2. Առաջարկել համայնքի ղեկավար Լ.Բեժանյանին ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շամլուղ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Շամլուղ, (0253)60474, shamlugh@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017թվականի N 24-Ա

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 20.06.2017թ. թիվ 101/107.3/2985-17 գրությունը՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Լոռու մարզի Շամլուղ քաղաքը Հանքաշեն քաղաք անվանափոխելու և Շամլուղ համայնքի կազմի մեջ մտնող Ախթալա բնակավայրը Սպիտակաշեն անվանափոխելու համար:
2. Առաջարկել պետական լիազոր մարմնին՝ ,,Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված կարգով կատարելու սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱԲԱԲՅԱՆ ՎԱՂԻՆԱԿ
2. ԲԵԺԱՆՅԱՆ ԱՇՈՏ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
4. ՇԱԽԿՅԱՆ ԱՆՈՒՇ
5. ՔՈՉԱՐՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՇԱՄԼՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՆԴՐՈՒՇ ԲԵԺԱՆՅԱՆ